



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկը հայտարարում է մրցույթ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետների, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի ամերիկյան համալսարանի «Տնտեսագիտության մագիստրոս» ծրագրի և Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի բարձր առաջադիմությամբ ուսանողներին

ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ անվան կրթաթոշակ նշանակելու համար

Մրցույթին կարող են մասնակցել 2020 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ բակալավրիատի III, IV կուրսերի և մագիստրատուրայի I և II կուրսերի բարձր առաջադիմությամբ ուսանող հանդիսացող անձինք:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև սույն թվականի **հունիսի 12-ը** **hrm@cba.am** էլեկտրոնային հասցեին ուղարկել հետևյալ փաստաթղթերը՝ «subject» մասում գրելով «կրթաթոշակ».

1. դիմումի ձև (հայտարարությանը կից),
2. տեղեկանք բարձրագույն ուսումնական հաստատությունից առաջադիմության միջին որակական գնահատականի վերաբերյալ սկսած ուսումնառության առաջին տարվանից,
3. դիպլոմի, դիպլոմի միջուկի պատճենը (առկայության դեպքում),
4. մեկ գունավոր լուսանկար:

Նշված ժամկետում մրցույթին դիմած ուսանողները **վերլուծական/հետազոտական նյութը** պետք է ներկայացնեն մինչև **հոկտեմբերի 15-ը**:

Վերլուծական/հետազոտական նյութի թեմաներ.

- Արժույթային ինտերվենցիաների դերը զարգացող երկրներում
- ՀՀ-ում ածանցյալ ֆինանսական գործիքների զարգացման հնարավորությունները
- ԿԲ քաղաքականությունը պանդեմիայի պայմաններում
- Մակրոտնտեսական ցուցանիշների մոտարկումն առցանց տվյալների հիման վրա (օր՝ պանդեմիայի ժամանակ տվյալների սղության պայմաններում)
- Միջազգային փորձը տեխնոլոգիապես բաց բանկային գործունեության (open banking) դաշտում և նրա կիրառելիությունը ՀՀ-ում
- Fintech նորարարությունների դերը աշխարհում և ՀՀ ֆինանսական համակարգում. Ռիսկեր և հնարավորություններ
- Հեռահար նույնականացման տեխնոլոգիաների ազդեցությունը ֆինանսական համակարգի վրա և զարգացման հեռանկարները ՀՀ-ում



Հեղափոխական/վերլուծական աշխատանքի նկարագրի պահանջներ

Հեղափոխական/վերլուծական աշխատանքի կառուցվածք.

- Տիրապետություն
- Բովանդակություն
- Նախաբան
- Հիմնական մաս
- Եզրակացություն և առաջարկություններ
- Գրականության ցանկ

Տիրապետություն վրա, որն աշխատանքի առաջին էջն է, անհրաժեշտ է նշել ուսանողի անունը, ազգանունը, ԲՈՒՀ-ը, հեղափոխական/վերլուծական աշխատանքի թեման:

Բովանդակությունում նշվում են բոլոր բաժիններն ու ենթաբաժինները, դրանց զբաղեցրած էջերն՝ ըստ հերթականության:

Նախաբանը պետք է ծառայի երկու նպատակի: Նախ, այն պետք է ծանոթացնի ընթերցողին թեմային: Երկրորդ, դրանում պետք է սահմանվի հեղափոխության/վերլուծության **հարցը, խնդիրը կամ թեզիսը**:

Հիմնական մասում, որը հեղափոխական աշխատանքի գլխավոր մասն է, անհրաժեշտ է զարգացնել թեզիսը՝ պարզառոտորոշում, բացատրություններով, օրինակներով և փաստերով, միաժամանակ նշելով, թե հեղափոխական/վերլուծական ինչ մեթոդներ և/կամ գործիքներ են կիրառվել հեղափոխողի կողմից:

Եզրակացությունում պետք է ամփոփվի աշխատանքը և տրվի պատասխան հեղափոխական/վերլուծական աշխատանքի հարցին կամ խնդրին:

Աշխատանքն անհրաժեշտ է գրել A4 ձևաչափի էջի վրա, 12 տառաչափով, ոչ ավելի, քան 15-20 տպագիր էջ:

Արգելվում է գրագողությունը և այլ անձի կողմից կատարված աշխատանքը որպես Ձեր կողմից կատարված ներկայացնելը:

Հանձնաժողովի կողմից լավագույն ճանաչված ուսանողներին
6 ամիս ժամկետով կհատկացվի
Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակ (ամսական 50 000 ՀՀ դրամ)

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել
(+37410) 59 26 34 հեռախոսահամարով
ՀՀ կենտրոնական բանկի Գլխավոր քարտուղարության
Անձնակազմի կառավարման վարչություն
Էլեկտրոնային փոստի հասցե՝ hrm@cba.am